

# ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2021

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍՏ 6

Խմբի համարը

Նստարանի համարը

#### Հարգելի դիմորդ

Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանք և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: ***Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:***

Առաջադրանքները կատարելուց հետո չմոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորը:

Մաղթում ենք հաջողություն:

1

**Բնական աշխարհահամակարգ է:**

- 1) արոտավայրը
- 2) ճահիճը
- 3) քաղաքը
- 4) ջրամբարը

2


**Ընտրել մոլորակների ճիշտ շարքը՝ ըստ Արեգակից ունեցած հեռավորության:**

- 1) Հրատ, Փայլածու, Երկիր, Արուսյակ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան
- 2) Փայլածու, Երկիր, Արուսյակ, Հրատ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան
- 3) Արուսյակ, Փայլածու, Երկիր, Հրատ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան
- 4) Փայլածու, Արուսյակ, Երկիր, Հրատ, Լուսնթագ, Երևակ, Նեպտուն, Ուրան

3

**Նկար 1- ում պատկերված է.**

- 1) ռելիեֆի կտրվածք՝ պրոֆիլ
- 2) լեռնագիծ
- 3) հորիզոնական
- 4) համադրման սանդղակ



նկար 1

4

**Հյուսիսային կիսագնդում ծառի կամ քարի ո՞ր կողմն է առավել շատ մամռակալած.**

- 1) արևմտյան
- 2) հյուսիսային
- 3) արևելյան
- 4) հարավային

5

**Արեգակի շուրջը պտտվելիս Երկիրը մերձակետում լինում է.**

- 1) հունիսի 22-ին
- 2) հունվարի 3-ին
- 3) հուլիսի 5-ին
- 4) մարտի 21-ին

6

1 : 900 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի հեռավորությունը 4 սմ է: Դրանց իրական հեռավորությունը կլինի.

- 1) 3600 կմ
- 2) 3,6 կմ
- 3) 36 կմ
- 4) 360 կմ

7

Ի՞նչ ծագման ապարներ են պեմզան ու պեռլիտը:

- 1) անօրգանական նստվածքային
- 2) հրային
- 3) փոխակերպային
- 4) օրգանական նստվածքային


8

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Երկրագնդի վրա առավել հաճախ երկրաշարժեր լինում են պլատֆորմներում:
- 2) Աշխարհագրական թաղանթի առաջացման և զարգացման ամբողջ ընթացքը բաժանվում է 3 փուլի՝ երկրաբանական, կենսաբանական, մարդածին:
- 3) Հարթավայրեր առաջանում են ջրիկ մագմայի արտահոսման պատճառով:
- 4) Ծալքաբեկորավոր լեռներն առաջացել են տեկտոնական շարժումների հետևանքով:

9

Նկար 2 – ում ո՞ր թվով է նշված հարավային բարեխառն ջերմային գոտին:



նկար 2

- 1) 4
- 2) 1
- 3) 2
- 4) 3

10

Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Աֆրիկայի արևելյան ափերի կլիմայի վրա դրական ազդեցություն ունի Սոմալիական ծովային հոսանքը:
- 2) Եվրասիայի արևմտյան ափերի կլիմայի վրա դրական ազդեցություն ունի Հյուսիսատլանտյան ծովային հոսանքը:
- 3) Հարավային Ամերիկայի արևմտյան ափերի կլիմայի վրա բացասական ազդեցություն ունի Պերուական ծովային հոսանքը:
- 4) Եվրասիայի արևելյան ափերի կլիմայի վրա դրական ազդեցություն ունի Կուրոսիո ծովային հոսանքը:

11

Գետի լայնակի կտրվածքի մակերեսը 15 մ<sup>2</sup> է, ջրի արագությունը՝ 2 մ/վ: Որքա՞ն է գետի ջրի ծախսը:

- 1) 45 մ<sup>3</sup>/վ
- 2) 7,5 մ<sup>3</sup>/վ
- 3) 30 մ<sup>3</sup>/վ
- 4) 9,5 մ<sup>3</sup>/վ

12

Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Եփրատ և Տիգրիս գետերը հորդանում են ձմռանը:
- 2) Հուանհե ու Յանցզի գետերը հորդանում են աշնանը:
- 3) Ամազոն և Կոնգո գետերը հորդանում են գարնանը:
- 4) Ամուդարյա և Սիրդարյա գետերը հորդանում են ամռանը:

13

Բնության բաղադրիչների ո՞ր զուգորդությունն է ճիշտ:

- 1) տայգա-պոդզոլային հող-եղևնի, սոճի
- 2) տափաստան-կարմրահող-փետրախոտ, սիզախոտ
- 3) անապատ-սևահող-օշինդր, ուղտափուշ
- 4) տունդրա-կմախքային հող-լորենի, հացենի

14


Ինչպե՞ս է կոչվում ներկայիս երկրաբանական դարաշրջանը:

- 1) Արխեյան
- 2) Պրոտերոզոյան
- 3) Կայնոզոյան
- 4) Մեզոզոյան

15

Մակրոթացության և տեղատվության հերթափոխը աշխարհագրական թաղանթի ո՞ր հատկանիշն է արտահայտում:

- 1) զոնայականություն
- 2) գոտիականություն
- 3) միասնականություն
- 4) ռիթմիկություն



քարտեզ 1

16

Քարտեզ 1-ում ո՞ր կղզին է նշված Բ տառով:

- 1) Սարդինիա
- 2) Կրետե
- 3) Սիցիլիա
- 4) Կիպրոս

17

Քարտեզ 1-ում ո՞ր գետն է նշված Գ տառով:

- 1) Եփրատ
- 2) Ինդոս
- 3) Ճորոխ
- 4) Տիգրիս

18

Ո՞ր շարքում են Եվրասիայի լճերը դասավորված արևմուտքից արևելք ճիշտ հերթականությամբ:

- 1) Արալ, Սևան, Լադոգա, Բալխաշ
- 2) Լադոգա, Սևան, Արալ, Բալխաշ
- 3) Սևան, Լադոգա, Բալխաշ, Արալ
- 4) Բալխաշ, Լադոգա, Սևան, Արալ

19

Հարավային Ամերիկայի հարթավայրերից ո՞րն է սարահարթ:

- 1) Ամազոնի
- 2) Օրինոկոյի
- 3) Լա Պլատայի
- 4) Պատագոնիայի

20

Հյուսիսային Ամերիկա մայրցամաքի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մեծ Ավազան սարահարթում տարածվում են կիսաանապատային ու անապատային լանդշաֆտները:
- 2) Առավել մեծ տարածում ունեն անապատներն ու կիսաանապատները:
- 3) Տոնադոն հատկապես մեծ ավերածություններ է առաջացնում Կենտրոնական Ամերիկայում:
- 4) Կենտրոնական մասում հատկապես արևմուտքից արևելք տարածվում են անտառատափաստաններն ու տափաստանները:

21


Աֆրիկայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Նեղոսը ստորին հոսանքում լեռնային գետ է:
- 2) Նեղոսը հոսում է միայն հասարակածային, մերձհասարակածային և մերձարևադարձային գոտիներով:
- 3) Սպիտակ և Կապույտ Նեղոսները միախառնվում են Ասուան քաղաքի մոտ:
- 4) Նեղոսի հովիտը Մահարայի ամենախոշոր և հնագույն օազիսն է:

22

Ո՞ր կլիմայական գոտում է գտնվում Գ քնակավայրը՝ ըստ նկար 3-ի:

- 1) հարավային մերձարևադարձային
- 2) հասարակածային
- 3) հարավային մերձհասարակածային
- 4) հյուսիսային բարեխառն



նկար 3

23

**Բնութագրումով որոշել մայրցամաքը:**

*Ամենաչոր մայրցամաքն է: Այստեղ բացակայում են բարձր լեռները, սառցադաշտերը և գործող հրաբուխները: Ո՞ր մայրցամաքի մասին է խոսքը:*

- 1) Հարավային Ամերիկա
- 2) Աֆրիկա
- 3) Ավստրալիա
- 4) Անտարկտիդա

24

**Քաղաքական քարտեզի ձևավորման նորագույն ժամանակաշրջանի երրորդ փուլի կարևոր իրադարձությունն չէ.**

- 1) Հարավսլավիայի փլուզումը
- 2) Հնդկաստանի անկախացումը
- 3) Գերմանիայի վերամիավորումը
- 4) Չեխոսլովակիայի տրոհումը

25

**Ո՞ր տարածաշրջանին են առավել շատ բնորոշ երկրաչափական ու աշխարհագրական սահմանները:**

- 1) Աֆրիկա
- 2) Հարավարևելյան Ասիա
- 3) Եվրոպա
- 4) Լատինական Ամերիկա

26

**Ընտրել «պետություն-կառավարման ձև» համապատասխանությունների ճիշտ շարքը:**

- |             |                                   |
|-------------|-----------------------------------|
| 1. Կատար    | ա. նախագահական հանրապետություն    |
| 2. Դանիա    | բ. բացարձակ միապետություն         |
| 3. Գերմանիա | գ. սահմանադրական միապետություն    |
| 4. Բրազիլիա | դ. խորհրդարանական հանրապետություն |

- 1) 1-ա, 2-բ, 3-գ, 4-դ
- 2) 1-բ, 2-գ, 3-դ, 4-ա
- 3) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
- 4) 1-դ, 2-ա, 3-բ, 4-գ

27

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Բնակչության վերարտադրությունը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական պայմաններով:
- 2) Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներին բնորոշ են ցածր ծնելիությունը, ցածր մահացությունը, ցածր բնական աճը:
- 3) «Ժողովրդագրական պայթյունը» բնութագրվում է բնակչության դանդաղ աճով և բնորոշ է զարգացած երկրներին:
- 4) Բնակչության կտրուկ աճի հետևանքով զարգացած երկրներում ստեղծվել է «ժողովրդագրական ճգնաժամ»:

28

**Բազմազգ պետություն է.**

- 1) Հայաստանը
- 2) Ճապոնիան
- 3) Հնդկաստանը
- 4) Իտալիան

29

**«Մշակաբույս-առաջատար երկիր» գույգերից ընտրել սխալը.**

- 1) շաքարեղեգ-Ուկրաինա
- 2) բրինձ-Չինաստան
- 3) ձիթենի-Իսպանիա
- 4) եգիպտացորեն-ԱՄՆ

30

**Ո՞րն է Կանադայի մայրաքաղաքը:**

- 1) Հավանա
- 2) Գվատեմալա
- 3) Օտտավա
- 4) Մանագուա

31

**Ո՞ր գետը չ/ հոսում Ֆրանսիայի տարածքով:**

- 1) Օդերը
- 2) Ռոնը
- 3) Լուարը
- 4) Սենը

32

**Մեծ Բրիտանիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:**

- 1) Տեքստիլ արդյունաբերության խոշորագույն կենտրոնը Բիրմինգհեմ քաղաքն է:
- 2) Սև և գունավոր մետաղաձուլությունը հիմնականում կենտրոնացված է նավահանգստային քաղաքներում:
- 3) Խոշոր քաղաքներից են Մանչեստրը և Մայնի Ֆրանկֆուրտը:
- 4) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը բուսաբուծությունն է:

33

**Իրանի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Կասպից ծովի ափամերձ շրջաններում գլխավոր մշակաբույսը փյունիկյան արմավենին է:
- 2) Երկիրը հարուստ է ջրային ու անտառային ռեսուրսներով:
- 3) Հարավկասպիական դաշտավայրը երկրի ամենաչոր շրջանն է:
- 4) Երկրի կենտրոնական շրջաններում գյուղատնտեսության հիմքը ոռոգովի երկրագործությունն է:

34

**Ո՞ր երկիրը աշխարհում առաջատար չէ մեղվաբուծության արտադրանքի ծավալով:**

- 1) Սաուդյան Արաբիա
- 2) ԱՄՆ
- 3) Մեքսիկա
- 4) Ռուսաստան



35

Ո՞ր պետությունները Լատինական Ամերիկայում *չեն* գտնվում:

- 1) Պարագվայը և Բրազիլիան
- 2) Լիբիան և Մարոկկոն
- 3) Արգենտինան և Չիլին
- 4) Կուբան և Գվատեմալան

36

Ո՞ր տարածաշրջաններում է տարածվում անագի գոտին:

- 1) Հարավարևելյան և Հարավային Ասիա
- 2) Հարավային և Արևելյան Աֆրիկա
- 3) Հյուսիսային և Հարավային Եվրոպա
- 4) Լատինական և Հյուսային Ամերիկա

37

ԱՄԵԱՆԻ - ի անդամ երկրներ են.

- 1) Ռուսաստանը և Ճապոնիան
- 2) Ինդոնեզիան և Սինգապուրը
- 3) Չինաստանը և Վրաստանը
- 4) Ավստրալիան և Թուրքիան

38

Բնակչության թվով գերխոշոր երկիր է.

- 1) Գանան
- 2) Ավստրալիան
- 3) Պերուն
- 4) Մեքսիկան

39

ԱՄՆ - ին են պատկանում.

- 1) Ֆոլկլենդյան կղզիները
- 2) Բահամյան կղզիները
- 3) Հավայան կղզիները
- 4) Կուրիլյան կղզիները

40


Լատինական Ամերիկայի տեղաբնիկ ժողովուրդներից *չեն*.

- 1) բուշմենները
- 2) մայաները
- 3) ացտեկները
- 4) ինկերը

41

«ԼՃեր-գոգավորության ծագում» գույգերից ընտրել *սխալը*:

- 1) Ուրմիա, Ակնա-տողանքապատվարային
- 2) Փարվանա, Խանչալի-հրաբխային
- 3) Քարի, Սև-սառցադաշտային
- 4) Սևանա, Վանա-տեկտոնահրաբխային



քարտեզ 2

42

Քարտեզ 2-ում *n* ը լեռնաշղթան է նշված Բ տառով:

- 1) Բարգուշատի
- 2) Վայքի
- 3) Զանգեզուրի
- 4) Մեղրու

43

Քարտեզ 2-ում *n* ը լեռնանցքն է նշված Դ տառով:

- 1) Քաջարանի
- 2) Սևանի
- 3) Որոտանի
- 4) Վարդենյաց

44

Հրաբխային լեռնագագաթների ո՞ր զույգն է գտնվում Հայկական հրաբխային բարձրավանդակի հարավային մասում:

- 1) Սրմանց, Սիփան
- 2) Վարդենիս, Իշխանասար
- 3) Արագած, Աժդահակ
- 4) Աբուլ, Ծաղկավետ

45

Մերձալպյան և ալպյան մարգագետիններում մեծ տարածում ունեն.

- 1) մասրենին, գազը, աբեղախոտը
- 2) օշինդրը, աղածաղիկը, ուղտափուշը
- 3) փետրախոտը, շուղախոտը, կորնգանը
- 4) գայլաթաթը, երեքնուկը, անմոռուկը

46

Արարատյան դաշտի գրունտային ջրերի բարձր մակարդակը ո՞ր հողերի առաջացման պատճառ է:

- 1) մարգագետնատափաստանային
- 2) աղուտ-ալկալի
- 3) լեռնաշագանակագույն
- 4) կիսաանապատային գորշ

47

Արմավիրի մարզի վերաբերյալ ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնակչության խտությունը արևմուտքից արևելք շարժվելիս նվազում է:
- 2) ՀՀ առավել խտաբնակ մարզերից է:
- 3) Մեծ է գյուղական բնակչության տեսակարար կշիռը:
- 4) Մարզկենտրոնը մարզի ամենամեծ քաղաքն է:

48

ՀՀ տուֆի արդյունահանման խոշոր կենտրոն է.

- 1) Արթիկը
- 2) Ապարանը
- 3) Թալինը
- 4) Մարալիկը

49

ՀՀ-ում մետաղական ալյումինի արտադրությանն առավելապես նպաստել է.

- 1) գունավոր մետաղաձուլության տարբեր ճյուղերի զարգացումը
- 2) նեֆելինային սիենիտների հարուստ պաշարների առկայությունը
- 3) Սևան-Հրազդան ջրէկների կասկադի կառուցումը
- 4) տնտեսության տարբեր ճյուղերի կողմից ալյումինի պահանջարկի մեծացումը

50

ՀՀ գյուղատնտեսության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ:

- 1) Ծիրանենու մշակության գլխավոր շրջաններից է Լոռվա սարահարթը:
- 2) Գյուղատնտեսության առաջատար ճյուղը անասնապահությունն է:
- 3) Հացահատիկային ցանքատարածություններում գերակշռում է աշնանացան ցորենը:
- 4) Խաղողի մշակության վերին սահմանը 2100-2200 մ բացարձակ բարձրություններն են:

51

**Բնական ռեսուրսների ընդհանուր քանակի (պաշարների) հարաբերակցությունը դրանց տարեկան օգտագործման քանակին կոչվում է.**

- 1) ռեսուրսախնայողություն
- 2) ռեսուրսների տնտեսական գնահատում
- 3) ռեսուրսաապահովվածություն
- 4) ռեսուրսների ռացիոնալ օգտագործում

52

**Ո՞ր շարքի բոլոր երկրներն են բնական ռեսուրսների պաշարների առավել մեծ բազմազանությամբ:**

- 1) Կանադա, ԱՄՆ, Չինաստան
- 2) Ճապոնիա, Գերմանիա, Ավստրալիա
- 3) Ֆրանսիա, Իտալիա, Բելառուս
- 4) Ռուսաստան, Ուկրաինա, Հայաստան

53

**Բնական միջավայրի վրա մարդու բացասական ազդեցության օրինակ է.**

- 1) ջրի օգտագործման փակ ցիկլերի ներդրումը
- 2) լանջերի դարավանդավորումը
- 3) բաց եղանակով շինանյութերի հանույթը
- 4) անտառաջերտերի ստեղծումը

54

**Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) ՄԱԳՍԵ-ն զբաղվում է հողերի էրոզիայի դեմ պայքարի հիմնախնդրով:
- 2) Բնապահպանության ոլորտում երկկողմ և բազմակողմ միջպետական համագործակցության առաջին փորձն արել են Աֆրիկայի երկրները:
- 3) Սահմանային և տարանցիկ գետերի օգտագործումն ու պահպանությունը ամեն երկիր կազմակերպում է ինքնուրույն:
- 4) «Միջազգային Կարմիր գրքի» կազմման և հրատարակման աշխատանքները գլխավորում է Բնության և բնական ռեսուրսների պահպանության միջազգային միությունը(ԲՊՄՄ):

55

**Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Աշխարհի խոշոր արդյունաբերական շրջաններին բնորոշ են սնոգը, թթվային անձրևները, աղմկային աղտոտումը:
- 2) ՄԱԿ-ի մասնագիտացված բնապահպանական կազմակերպություն է ՅՈՒՆԵՊ-ը:
- 3) Տեղային էկոլոգիական աղետները շրջակա միջավայրի համամոլորակային փոփոխությունների պատճառ դառնալ չեն կարող:
- 4) Էկոլոգիական աղետալի շրջաններն աշխարհում աստիճանաբար ավելանում են:

56

**Գրել այն հրաբուխների համարները, որոնք Եվրասիայում են.**

- |             |              |
|-------------|--------------|
| 1) Կոտոպախի | 5) Ռուխ      |
| 2) Հեկլա    | 6) Էրեբուս   |
| 3) Կամերուն | 7) Ֆուձիյամա |
| 4) Դեմավենդ | 8) Կրակատաու |

57

Գրել այն սարքերի համարները, որոնցով չափում են մթնոլորտային երևույթներ.

- |                |                |
|----------------|----------------|
| 1) ֆլյուզեր    | 5) կողմնացույց |
| 2) սելսամոգրաֆ | 6) անեմոմետր   |
| 3) բարոմետր    | 7) էխոլոտ      |
| 4) կուրվիմետր  | 8) պալետկա     |

58

Տրված են ծովային տաք հոսանքներ: Գրել Հնդկական օվկիանոսի ծովային հոսանքների համարները.

- |                    |                      |
|--------------------|----------------------|
| 1) Մուսսոնային     | 5) Գվինեական         |
| 2) Բրազիլական      | 6) Գոլֆստրիմ         |
| 3) Գվինանական      | 7) Արևելաավստրալական |
| 4) Ասեդի հրվանդանի | 8) Մոզամբիկի         |

59

Գրել Ճապոնական կղզեխմբի կղզիների համարները.

- |                   |             |
|-------------------|-------------|
| 1) Կուրա          | 5) Հոնսյու  |
| 2) Ճամայկա        | 6) Սիկոկու  |
| 3) Նյուֆաունդլենդ | 7) Կյուսյու |
| 4) Հոկայդո        | 8) Սախալին  |

60

Գրել այն երկրների համարները, որոնք ԽՍՀՄ-ի կազմում չեն եղել.

- |              |              |
|--------------|--------------|
| 1) Սլովենիա  | 5) Տաջիկստան |
| 2) Վրաստան   | 6) Էստոնիա   |
| 3) Բուլղարիա | 7) Սլովակիա  |
| 4) Մոլդովա   | 8) Լատվիա    |

61

Գրել Կուրի ավազանին պատկանող վտակների համարները.

- |             |              |
|-------------|--------------|
| 1) Արփա     | 5) Դեբեդ     |
| 2) Գետիկ    | 6) Հրազդան   |
| 3) Որոտան   | 7) Խաչենագետ |
| 4) Մարմարիկ | 8) Փամբակ    |

62

ՀՀ տրված ջրամբարների համարները դասավորել դրանց ջրի ծավալների աճման կարգով.

1. Կեչուտի                      2. Ախուրյանի                      3. Սպանդարյանի

63

Տրված են երկրագնդի ներքին կառուցվածքի մասերը: Վերադասավորել տրված հաջորդականությունը՝ սկսած ամենաստորին շերտից.

1. ապթենոսֆերա                      2. միջնապատյան                      3. միջուկ                      4. երկրակեղև

64

Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 680 մմ է, իսկ գագաթին՝ 330:  
Որոշել Լեռան բացարձակ բարձրությունը:

65

Քեյփթաուն քաղաքի (Հարավաֆրիկյան Հանրապետություն) միջին ամսական ջերմաստիճանների աղյուսակն է.

Միջին ամսական ջերմաստիճանը (°C)											
հունվ.	փետ.	մարտ	ապր.	մայ.	հուն.	հուլ.	օգ.	սեպտ.	հոկտ.	նոյ.	դեկտ.
21,2	21,5	20,3	17,5	15,1	13,3	12,5	13,2	14,5	16,3	18,3	20,3

Որոշել Քեյփթաուն քաղաքի ձմեռային միջին ջերմաստիճանը:

(66-67) Պետության բնակչության թիվը 40 մլն է: Գյուղաբնակների բացարձակ թիվը 16 մլն մարդ է, իսկ տարածքի մակերեսը՝ 200 000 կմ<sup>2</sup>:

66

Որոշել բնակչության միջին խտությունը:

67

Որոշել ուրբանիզացման մակարդակը:

68

Որոշել ցորենի ցանքատարածությունների մակերեսը(հա), եթե ցորենի համախառն բերքը 24000 տ է, իսկ միջին բերքատվությունը՝ 40 ց/հա:

69

Չինաստանի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Մետաղաձուլական շրջանները հիմնականում տեղաբաշխված են երկրի արևմտյան շրջաններում:
- 2) Աշխարհի առաջատար երկրներից է պարարտանյութերի և ցեմենտի արտադրությամբ:
- 3) Հարուստ է ածխի ու երկաթաքարի պաշարներով:
- 4) Թեթև արդյունաբերության խոշոր կենտրոնը Շանհայն է:
- 5) Մնդի արդյունաբերությունը զարգանում է ներկրվող հումքի հիման վրա:
- 6) Արդյունաբերության առաջատար ճյուղերից է մեքենաշինությունը:

70

Կոտայքի մարզի վերաբերյալ տրված պնդումներից որո՞նք են ճիշտ, որո՞նք՝ սխալ.

- 1) Այս մարզում են Հատիս և Արայի լեռների հրաբխային կոները:
- 2) Արտաքին հաղորդակցությունն իրականացվում է միայն արևմուտքից արևելք ուղղությամբ:
- 3) Մեքենաշինության առաջատար ճյուղերից են հաստոցաշինությունը և սարքաշինությունը:
- 4) Ընդերքն աղքատ է մետաղային օգտակար հանածոներով:
- 5) Թռչնաբուծությունն անասնապահության առաջատար ճյուղերից է:
- 6) Գորգերի արտադրանքով հանրապետության առաջատար մարզերից է: